

Գ Ր Ա Կ Ա Ն Ք

Վ Ի Բ Գ Ի Լ Ի Ո Ս Ի « Ե Ն Է Ա Կ Ա Ն » Ե Ն

Ե Ն Է Ա Ս Դ Ժ Ո Ւ Ք Կ' Ի Զ Ն Է

Լայնափեռեկ եւ ահագին բերանով
Անձաւ մը կար անդրնդախոր, ապառաժ,
Պատըսպարուած լինի մը սեւ ջուրերով
Ուանտառներուն հովանիով խաւարուտ.
Որուն վրայէն ոչ մէկ թըռչուն չէր կըրնար
Անպատուհաս ուղղել թըռչանքը թելին.
Ձի այն վըհին աղջամղջուտ ծակորէն
Կը ծըխէր վեր դէպ ի կամարն երկնային
Շոգի մը ժանտ ու մահառիթ, ուստի Յոյնք
Կոչեցին այն տեղւոյն անունն՝ Աեռնոն:
Ենէաս հոն կը տանի նախ չորս երինջ
Սեւ քամակով, եւ քորմուհին թափելով
Անոնց գըլխուն վըրայ գինի, կը կտտէ
Եղջիւրներուն մէջի մազերու ծակորէն
Կը դընէ սուրբ կրակին վըրայ, նախընծայ
Իբրը նըւէր, եւ կը կանչէ բարձրաձայն
Եկատն, հըզօրն երկընթին մէջ ու դժուրին:
Դանակն անոնց կողը կը մխեն ուրիշներ
Եւ հող արիւնը կ'ամփոփեն բաժակով:
Կը փողոցն դաշխով ինքն ենէաս
Որոշ մը սեւ Եւմենէայք մօրն ու մեծ քորջն,
Ու քեզ ալ, ո՛վ Պերսեփոնէ՝ կով մ'ամուլ:
Եւ կը կանգնէ գիշերային բազիններ
Ըտիգական թագաւորին ի պատիւ.
Կը տարածէ բոցերուն վրայ երիջներն
Ամբողջովին, եւ կը ցօղէ ճարպալիւր
Իւղով անոնց փորոտիներն հրաբորբոք:
Եւ աւասիկ արեւակին նախածագ
Նըշոյններուն լուսափողփող ցաթելուն՝
Սկըսաւ երկիրն ուռքերնուն տակ մըռնչել.
Եւ շուններուն մուծին մէջէ հաշիւներն
Իմացուցին Եկատէի մօտենան:

« Հնու գացէք ասէ, հեռու, ո՛վ պիղծեր,
Աղաղակն Սիբիլան, ո՛ն, դուրս ելէք
Ամէնքնիդ ալ նըրիւական անտառէն.
Իսկ դուն քաշէ սուրբ, Ենէաս, ու քաշէ:
Ենէաս, հոս հիմա պէտք է քաջութիւն,
Հոս պէտք է կուրծք մ'ադիասիրտ եւ ամուր:
Ըսաւ, մըտաւ անձաւէն ներս մոլեգին,
Եւ Ենէաս առաջնորդէր Ետեւէն
Ազատաքայլ եւ անվեհեր կը քաշէր:

Հոգիներու ո՛վ վէհապետ աստուածներ,
Դուք լուռ Ստուերներ, եւ դուք Քաւոս, Փիւ,
[գեթոն,

Դու օթարան անծայր լուծեան ու ցայգին,
Թոյլ տըրուի թող ինձ լըսածներս պատմել
Եւ ձեր կամքով հանել իրերն երեւան
Քաշելով դուրս երկրի մըռայլ խոր ծոցէն:

Մուկ գիշերով լուռ ու միհակ կ'անցնէին
Պըղուտոնի լայնածաւալ պետութեան
Աղջամղջին եւ ամայի գաւառներն:
Այսպէս գիշեր ժամանակ թաւ անտառէն
Լուսնի աղօտ լոյսով կ'անցնի ուղեւորն,
Երբ Արամազդ մէզով երկինքն է պատեր
Եւ մուկը սեւ գողցեր է գոյնն իրերուն:

Բալկին առջիւ՝ մօտ Որկոսի բերանին
Կը բնակին ողբն ու սիւր կըրծող տագնապներն.
Հոն են տըժգոյն Ախտերն ու տխուր ծերութիւնն,
Վատախորհուրդ փայցն ու երկիւղն, եւ դըժ-
[խեմ

Աղքատութիւնը՝ սոսկալի դէմքերով,
Ախատութիւն եւ Մահ եւ Քուն՝ իր հղբայրն
Ու ժանտաժուտ ցընծութիւնները սըրաին,
Եւ դիմացի շեմքին վըրայ կ'որջանան
Մահաբեր Մարտն ու Եւմենէայք երկաթէ
Անկողիններն, եւ անքզամ գըժտութիւնն՝
()ձախըռի իր մագերուն խոպոպներն
Արիւներանգ ժապաւէնով մը զըսպած:
Կընձին մը մեծ եւ հովանուտ մէջտեղն հոն
Իր բազուկները կը սըփոէ բազմամեայ.
Կ'ըսուի թէ սին Երազներն հոս կը բնակին
Ծառին մէջ մի տերեւներուն տակ կըլպած.
Ուրիշ անթիւ խառնագազան հիւաղներ,
Կենտաւրոսներ եւ Սկիլլաներ երկկերպի
Եւ Բրաքեւսն հարիւրձեռնեայ ու Լեոնեան
Չարսուրելի վիշապն ահեղ շըշինով,
Հրաշունչ Քիմեոն ու Գորգոններն, Արպեաներն
Եւ եռանձնեայ կերպարաններն ուրուակերպ:
Յանկարծաճաս պիտէ մ'յուզուած Ենէաս
Կը բըռնէ սուրն ու կը շըջէ անոր սայրն
Եկողներուն, եւ իմաստուն Սիբիլան
Եթէ իրեն չիմացընէր որ անոնք
Էին թեթիւ եւ անմարմին ոգիներ
Որ խաբուսիկ ձեւեր առած կը թըռչին,
Ան կը փըրթէր անոնց վըրան, ու կու տար
Ըտուերներուն սըրովը սին հարուածներ:

Հոս է ճամբան որ կը տանի դէպ ուղիդ
Դըժոխային Ախերոնի ջուրերուն.
Գետ մ'յորձախոր, անդընդապտոյտ ու պըղտոր,
Որ միշտ կ'եռայ եւ լայնաբաց իր բերնով
Կոխուտոնի մէջ կը ժայթքէ բոլոր աղիմն:
Այս ջուրերուն, գետին պահէկն է Քարոն
Ու նաւավարն հիազարհուր, ճառադէմ,
Որուն ծնօտէն վար կուրծքին վրայ կը փըռուի
Հերմակ մօրուք մը թանձրախիտ ու զագիր.

փայլակնացայտ են աշուրներն, եւ ուսէն
կախառած է վար հանգոյցով զգեստ մ'աղտեղի.
Կը վարէ լատտն առագաստով ու թիով,
Եւ թըխագոյն իր մակոյկով կը տանի
Կը փոխագրէ մնած մարդիկն ափէ սփ:
Դէն է արգէն, բայց իբր աստուած ունի միշտ
Անետորոյթ մը կորովի եւ առեգր:
Ամէն կողմէ խուռն ամբոխ մ' հոն կը խուժէ.
Մարդեր, կիներ, կենդարա վեհ դիւցազներ,
Զըկարգըւած աղընականեր ու սրղաք,
Եւ աշքերնուն դիմաց իրենց հօյն ու մօր
Խարոյկ հանուած պատանիներ նորափթիթ.
Անան անջի ցուրտերուն չեն թօթափիր
Անտառներուն մէջ այնքանի տերեւներ,
Եւ ոչ այնքան երամովին հոյհիհոյլ
Ծովուն խորէն դէպ ի ցամաք կը թափի
Թըռչուններուն տարմն անհամար, ցուրտ ձըմեռն
Երբ ծովերէն անդին զանոնք քըչելով
Կը դըրժէ դէպ ի երկիրներն արեգջեր:
Կ'աղայչէին գետէն անցնիլ առջիններն,
Ու դիմացի ափին տենելով ձեռուերին
Կ'երկընցնէին. իսկ նաւավարը դաժան
Կ'ընդունէր մերթ ասոնք եւ մերթ ալ անոնք
Եւ ուրիշներն ափէն հեռու կը վանէր
Ան ժըխորէն եւ այն անհուն ամբոխէն
Յուզուած՝ ըսաւ Ենէաս. «Ո՛վ կոյս, ըսէ՛,
Ինչո՞ւ ամբօք դէպ ի գետ կը վազէ,
Եւ ի՞նչ կ'ուզեն այդ հոգիներն, եւ ինչո՞ւ
Ասոնք ափէն կը հեռանան, եւ անոնք
Թուխ ալիքները կը ճեղքեն թիբերով:
Երկայնօրեայ քըրմուհին կարճ կը խօսի.
«Ո՛վ Անթիսեան զաւակ, դիւցազն իսկապէս.
Դուն կը տեսնես կոկիլաւան լիճն յործախոր
Եւ ըստիզեան ճահիճն՝ որուն վըրայ դէք
Սիրտ չեն ընէր երգնուլ՝ դըրժել զօրութեանն:
Ասոնք բոլոր՝ զոր կը տեսնես՝ ամբօին է
Թըռչուառներու՝ որոնք անթաղ են մնացած.
Այդ նաւավարը Քարոնն է. իսկ անոնք՝
Զորս ալիքները կը տանին՝ թաղուած են:
Հրաման չունի ան սոսկալի այս ափէն՝
Ակօսելով կերկերածայն կոհականերն՝
Յայնկոյս տանիլ հոգիներն այն անձերուն
Որոնք ոսկրերը գերեզման չեն մըտած:
Հարկը տարի կը թափառին կը թըռչին
Այս ափերուն շուրջն. անկէ վերջ կ'ընդունի
Յանկալի լիճը գիրենք իր ծոցին մէջ»:
Մըտածելով անոնց դըժնէ բախտին վրայ
Յուզուեցաւ սիրտն Անթիսիսի զաւակին
Ու կանգ առաւ ոտքը գետին քամելով:
Կը նըշմարէ հոն թաղծալից ու սըրտում
Մահուան յետին պատուէն զըրկուած Լեւկապիսն

Ու Լիկիոյ նաւատորմին պեռն Ռոման.
Որք իրեն հետ մեկնած էին Տրովայէն
Մըրըկոտ ծովով եւ էր հարաւն ընկըզմեր
Ալիքներուն ծոցը թէ՛ նաւ թէ՛ նաւազ:
Եւ հահ դէպ ի Ենէաս եւ դիւրէր
Հէք Պալինուրն, այն դեկավարն՝ որ դեռ նոր
Լիբեական ծովէն անցած ժամանակ՝
Երբոր աստղերը կը զըննէր՝ ինկած էր
Նաւուն խելքէն թաւալըրոր դէպ ի ծով:
Թանձր ըստուերին մէջէ հագիւ թէ ճանչցաւ,
Անոր այսպէս խօսեցաւ նախ Ենէաս.
«Աստուածներէն ո՞վ ըզքեզ, ո՞վ Պալինուր,
Խըլեց մենէ ու ծովուն տակը սուզեց:
Խօսէ խընդրեմ. անտարակոյս Ապոլոնո՛ւ
Որ զիս ասկէ առաջ բընաւ խաբած չէր՝
Զիս այս անգամ սնոտի յոյսով մը չոյցեց,
Գուշակելով թէ դուն ծովէն անվընաս
Պիտի գայիր դէպ Աստնեան սահմաններն.
Ա՛ս է ուրեմն արդիւնքը ի՛ր խոստումին»:
Եւ ան. «Ըզքեզ չըխաբեց ոչ Փերոսի
Եռոտանին, ո՞վ Անթիսեան չըքեզ պետ,
Ոչ ալ աստուած մը զիս ծովուն տակ սուզեց.
Այլ դեկն որ ինձ յանձնած էիր, եւ զոր ես
Ուժով բըռնած կ'ուղղէի նիթաքը նախն,
Դէպքով փըրթաւ բըռնի թափով մ'իր տեղէն
Եւ ինկալ վար դեկն հետք ծով տանելով:
Ախասաստ ծովուն վըրայ կ'երգնում քեզ
Որ ես ինծի համար այնքան չըվախցայ
Որքան քեզի, որ մի՛ գուցէ լաստափայտդ
Անառաջնորդ եւ անուղղակ մընացած
Ըլլար գազան կոհականերուն խաղալի:
Անծայր ծովուն մէջ անցուցի մըրըրկոտ
Երեք գիշեր՝ քըռուած սաստիկ հարաւէն.
Եւ հուկ չորրորդ առտուն աշքիս երեւցաւ
Ալիքներուն բարձըր ծայրի խալեանն:
Յուշիկ յուշիկ կը լողայի դէպ ի ափ
Եւ ապահով էի այլ եւս, եթէ քովս
Ճոխ աւարներ զըտնելու խօլ մըտածմամբ՝
Երկաթով վրաս չըյարձըկէր ազգ մ'անգութ,
Երբ ես շրդող ըզգեստներով ծանրացած
Կը ճըզնէի իմ կըռածազ ձեռքերով
Սեպոտ ժայռի մը սբաբըձ ծայրը ելլել:
Եւ արդ մարմինս ափին վըրայ թողլըռուած՝
Է մատնետուր ալիքներուն ու հովին:
Դե՛զ՝ երկընքի քաղցըր լոյսին, կենսատու
Սղին ու հօրդ ու ծաղկատի Գլուխին՝
Յոյսիդ համար՝ կ'աղայնմ՝ զիս ազատէ՛,
Անյաղթ դիւցազն, այս սոսկալի վիճակէն.
Գընա վելեան նաւահանգիստը զըտիր
Ու զիս հողին տուր վասըն զի կըրնաս տալ.
Եւ կամ եթէ ունիս միշոց մի՛ որ եւ է,

Կիցուհի մայրդ եթէ հընարք մը ցուցուց,
(Ձի դուռն առանց աստուածներուն օգնութեան
կարծած չէիր կըրնար անցնիլ մեծ գետերն
եւ ըստիգեան ճահիճն), արդ ձեռք երկնցուր
Տարաբախտի մ', ու տար զիս հետըդ մէկտեղ
Ալիքներուն մէջէ որպէս զի զոնէ
Մահուընէս վերջ հանդիստ կայան մ'ունենամ»:

Անոր խօսքերն այսպէս կ'ստորեց թըրմուհին.
« Այդ անըզամ փափաքն ուսկի'ց ունեցար,
Ո՛վ Պալինուր. արդ դուն ինչպէս կը ժուրհիս՝
Դեռ չըթաղուած՝ տեսնել օտիգեան կոհակներն
Ու եւմենայց ահաւոր գետն, ու անցնիլ
Կիմացն առանց աստուածներու հրամանին:
Յոյս մ'ունենար որ կարենաս չըրջել դուն
Աղաչանքով ճակատագրին վըճիռներն.
Այլ այս խօսքերը դուն լաւ միտքդ պահէ
Եւ ըսփոփէ դառն վիճակդ անոնցմով:
Քեզի գրացի քաղաքներուն բնակիչներն
Աղբըւելով երկրքի բիւր հրաշքներէն
Թաղամնական հանդիսաւոր պատիւով
Պիտի շիրմի մէջ հաղթիկն սպորներդ.
Ու պիտի տեղն յաւէտ կոչուի Պալինուր»:
Փայտելով անոր տազնապն այս խօսքերն
Ըսփոփեցին քջիկ մ' իր դառն կըսկծին.
Ուրախացաւ իր հոմանուն տեղւոյն վրայ:

Անոնք իրենց ուղին առաջ տանելով
Կը մօտենան գետին չափ. թէ Քարոն
Ըստիգական ալիքներէն նըմարեց
Որ անտառին մէջէ լըսիկ կ'երթային
Եւ կ'ուղղէին քայլերնին դէպ ի գետափ,
Յարձակեցաւ այս սաստալից խօսքերով.

« Ո՛վ ալ ըլլաս որ զինավառ կը դիմես
Դէպ ի մեր գետն, ըսէ՛, ի՞նչ բան ունիս հոս,
Եւ ալ եղած տեղէդ առաջ մի՛ չարժիր:
Ասիկա վայրն է Ստուերներուն ու Քունիին
Եւ Գիւղիին. հրաման չունիմ տանելու
Ողջ մարմիններ ըստիգական մականով:
Անտառակոյտ զիս շատ ուրախ մը չըրին
Ոչ Հերակլէսն՝ որ այս լիճին մէջ առի,
Ոչ Թեսէոս, Պիրիթոսն, թէպէտեւ
Աստուածորդի, Լանյաղթ իրենց զօրութեամբ:
Յանդգնեցաւ առաջինն իր ձեռքերով
Շըղթայելու Տարաբախտի պահապանին,
Ու զայն նոյն իսկ թաղաւորին գահոյքէն
Քաշեց տաբաւ մինչ կը զոփար դողդոջուն.
Իսկ միւս երկուքն առեւանգել ժպրհեցան
Պոտուտի կիկն հարսանեկան անկողնէն»:

Իսկ ամփոփեան Սիբիլլան այս համառօտ
Խօսքերն ըսաւ. «Հաղարտէ՛, մի՛ տազնապիր.
Այդպէս ոչ դաւ եւ ոչ դարան կայ մեր քով,
Եւ այս գէնքերը բըռնութիւն չեն բերեր:
Թող անհեթեթ կ'երբերն հաջէ յաւիտեան

Ու վախցնէ որջն տըժգոյն ըստուերներն.
Եւ թող պարկեշտ Պերսեփոնէն բընակի
Իւ համուսինն եւ հօրեղբոր քով յաւէ՛:
Աս՝ ինչեւս տրովացին է, մեծանուն
Կրօնքով, զէնքով, եւ տեսնելու համար հայրն
Երեբոսի խաւարչուտ խորքը կ'իջնէ:
Եթէ ալ զքան բարեպաշտիկ զորովէ
Կը մընայ քու սիրտդ անըզամ եւ անոստ,
Գիթ՝ այս ուղէը ճանչցիր». դուրս կը հանէ
Ուղէն որ էր իր ըզգեստին տակ ծածկած:
Հաւաժարին բարկութենէն ուռած սիրտն
Իշաւ, ուրիշ խօսք չաւեցուց թըրմուհին.
Ճակատագրեալ զաւազանին ձօնն արգոյ՝
Ջոր շատեց չէր տեսած՝ Քարոնն հիացուց.
Դարձեցելով փութով իր նաւը կապոյտ
Կը մօտենայ գետափուներին. ըստուերներն՝
Որոնք բըռնած էին տախտերը բոլոր՝
Կը վըտարէ ու կը պարպէ նաւուն ծածքն
Ու կ'ըղուենի ներս Լինէասն ահագին:
Կարձաւուն կուրը բեռնա տակ կը հեծէ
Ու հեղբերն ներս կ'առնէ շուրջ պըզտոր:
Հուսկ կըտրելով գետն ողջ առողջ կը հանէ
Քարոն՝ դիցազն ու թըրմուհին՝ ճանճախուտ
Մօրատին թաւ եղէգներու խարձին մէջ:
Անն անհեթեթ կերբերն այրին մէջ փըռուած
Մեծատարած՝ կը զըրդէ մուկ պէտութիւնն
Եռապատիկ որկորներուն հաղթելով:
Սներն արգէն կը ցըցուէին վիզն ի վեր.
Ջայն տեսնելով հայրուկն առջեւը նետեց
Թըմբեցուցիչ դեղ մը, հաստեայ մը միղդէ
Ու խաշխաշէ Սոլմալըուկ ու կատղած
Դազանն առաւ զայն ու կըլլեց, բանալով
Միանգամայն իր երեք հաստ որկորներն,
Ու փըռուելով գետին՝ իրանն ահարի
Պարգե՛, անձաւ բովանդակ բըռնելով:
Անոր թըմբիլը տեսնելով Ենէաս
Կը հեռանայ շուտ արկուքէն այն գետի
Ուրկէ անցնողն ամենաին չի դառնար:

Ջայնը լըսեց յանկարծ, ճիշդ մեծագոյն.
Շեքին առջիւ կ'արտասուէին աղէխարշ
Մահուկներու ճիղմ հոգիներն աղածրի,
Չորս՝ չըմբոշինած քաղցրութիւնները կեանքի,
Սեւ օր մ' անդուժ ապշուկելով ըստիգէն
Գերեզմանի մութ դառդիւրին մէջ մըլեց:
Անոնց քօփն են հոգիներն այն անձերուն
Որք անիրաւ դատաստանի զոհ եղան:
Դայց այս կայքերը չեն տըրուիր ոչ առանց
Դատաւորի, եւ ոչ առանց վիճակի:
Միովով սփարիւ կը շարժէ, կը կանչէ
Հուռ ըստուերներն համագումար ժողովի,
Եւ կը քըննէ անոնց վարքերն ու սերին:
Ասոնց դրացի են այն տըխուր ըստուերներն

իր խրճեցիցն իրենց անմեղ կեանքին թելն
 Իրենք իրենց ձեռքով, ու լոյսն ատելով՝
 Իրենց հոգին մարմիններնէն վանեցին։
 Հիմա ռբափ սիրով պիտի կըրէին
 Աղքատութիւն ու տառապանք երկրի վրայ։
 Ճակատագիրը սակայն չի հաւանիր,
 Եւ ատելի լինն իր տըխուր ջուրներով
 Անոնց չորս դին կը պաշարէ, եւ քլափօս
 Ինճապատիկ հոսանքներով կը պըրկէ։
 Կայ ստոր մօտն անծայր Հովիտն արտասուաց, —
 Այդ թաղծող վայրն այս անուիտով կը կոչուի, —
 Ուր կը ծածկեն գողուղիները գանոնք՝
 Զորս երկրի վրայ դժբնդակ սէր մը կըրծեց
 Իր անողորմ թալուկներով ու թոյնով,
 Եւ մուրտաստան մը գանոնք շուրջ կը պատէ.
 Մահերէնէն վերջն իսկ կը մըխան տակաւին։
 Կը իշմարէ ան հոն փեղրան ու Պրեկրիսն
 Ու արեւարդէմ Երեմիէն՝ ցուցնելով
 Անագորին գաւկէն առած իր վէրքերն.
 Հոն կը տեսնէ Պասիփայէն, Եւսեփէն
 Եւ ասոնց հետ Լաւոդամէն ու Կինիս՝
 Երբեմն առոյգ պատանի՝ արդ կին դարձեալ,
 Ճակատագրին ձեռքով փոխուած իր սեռին։

Անոնց հետ մեծ անասուն մէջ կը չըրջէր
 Փրինիկ Դիդէն նոր վէրքերով վիրաւոր։
 Եւ տրոպիցի գիւցազն հասաւ նէրա մօտ
 Իւ մառախլուտ մութիւն մէջէ զայն ճանչցաւ,
 Նըման մէկուն որ կը տեսնէ կամ կը թուի
 Նըմարել նոր լուսնի ծագումն ամպերէն,
 Սիրան յուզուեցաւ, աչքերն արցունք կըտըցան,
 Եւ նէրա հետ խօսեցաւ քաղցր սիրով.

« Թըշուա՛ն Դիդէ, ուրեմն իրա՛ւ էր այն գոյժն
 Որ ինձ հասաւ՝ թէ չես ապրիր դուն այլ եւս
 Եւ թէ կեանքիդ թելը խըզեր ես սըրով.
 Եւ, աւաղ, հ'ս եղոյ մահուանըդ պատճառ.
 Բայց թող ստողէրն ըլլայ վրկայ, աստուածներն,
 Հաւանքն՝ եթէ կայ երկրի խորքն այդպէս բան,
 Որ ափունքէդ ես ակամայ մեկնեցայ։
 Բայց հրամաննի՛րն աստուածներուն՝ որ հիմակ
 Կը ստիպեն զիս խաւարակուռ գիշերով
 Կըտընէ անցնիլ արհաւիրքի, սոսկուծի
 Այս օթարանն եւ ըստուերները տեսնել,
 Իրենք ինձի հարկադրեցին բացարձակ
 Որ քեզ թողու՛մ. եւ չըզըրցայ հաւատալ
 Որ իմ մեկուսմօ քեզ այդքան վիշտ պատճառէր.
 Կանգ առ, եւ մի՛ անհետանար առջեւէս.
 Ինչո՛ւ համար կը փախչիս դուն, եւ որմէ՞.
 Վերջին անգամն է որ կու տայ ինչ հրաման
 Ճակատապիրը քեզի հետ խօսելու։ »

Այս խօսքերով եւ իր արիւն արցունքով
 Ենէաս այն ոգին կապել կը ջանար,
 Որ գայրագին՝ կը նայէր ինքն ու խօսէր.

Յետոյ մէկդի դարձաւ, զամեն իր աշուին
 Անարժ գետին, ցուրտ անտաքեր մընալով
 Այն խօսքերուն, կարծես ըլլար ժայռ մը կարծր
 Եւ կամ հատոր մը Մարպեսեան մարմարի։
 Անհաշտօրէն փախաւ սրացաւ հուսկ յետոյ
 Ու ծուարեցաւ անտառին մէջ հովանուտ,
 Ուր Սիթէոս՝ իր ամուսինն առաջին
 Կը սիրէ զինքը փոխադարձ գորովով։
 Ենէաս այն դժոնէ դէպքէն վըշտահար
 Ալքով անոր կը հետեւէր հեռուէն
 Արտասուելով, ցաւակցելով դըշխոյնի։

Յետոյ ան իր ճամբան առաջ կը վարէ,
 Եւ ալ հասած էին դաշտերը վերջին
 Ուր խըռըւած են հոյանուն մարտիկներն
 Ուրիշներէն անշատ. իրեն կ'երեւայ
 Հոն Տիտէոս, Պարթենոպէն արիսեան
 Եւ դաւկադէմ՝ տըգոյն Ագրասուն. հոն էին
 Եւ տրովացիք, որ մարտի մէջ ինչալով
 Մարողոց թափել տուին վերն ալիքան արցունք։
 Անոնց երկայն կարգը աշխարհ Ենէաս,
 Սիրտն յուզուեցաւ, լացաւ երեք որդիներն
 Անտեհորի՝ Գլաւկոս, Մեդոն, Թերսիլոք,
 Դեմետրի քուրմը Պոլիփետ, Իդէոս
 Դեռ տակաւին կառքին վրայ, դեռ գէնքը ձեռքն։
 Ալէն՝ ձախէն Ենէասի շուրջն առին
 Այն հոյիհոյլ անթըւելի հոգիներն.
 Անոնք զոհ չեն զայն մէկ անգամ տեսնելուն.
 Կը փափակեն գանին երկար բըռնել հոն,
 Հետը քալել, զաւուն պատճառն իմանալ։
 Բայց յունական զօրագլուխներն ու զօրքնին
 Ազամեմի երբոր դիւցազը տեսան,
 Ու զնուգարդն որ կը փայլէր մութիւն մէջ,
 Բըռնընեցան զարհուրելի սոսկումէ.
 Ոմանք փախան թիկնադարձոյց, ճիշտ ինչպէս
 Կը փախչէին երբեմն դէպ ի նաւերն.
 Եւ ուրիշներ կ'ուզեն պոռով, բայց հազիւ
 Կ'ենէ տըկար ձայն մ' իրենց բաց բերանէն։
 Ան հոն տեսաւ եւ Պրիամեան Դիփիփոն,
 Որուն մարմինը բըզըքտուած էր բոլոր.
 Դէմքն աղճատուած ու ձեռուները կըրճատ,
 Խըլուած՝ գերփուած ականջներն իր քունքերէն
 Եւ ահելի վէրքով մը քիթը կըտրած։
 Ան կը ծածկէր անգուժ վէրքերն ամթէն
 Ու կը գոփար. բայց զայն ճանչցաւ Ենէաս,
 Եւ խօսեցաւ անոր ծանօթ իր ձայնով.

« Ո՛վ Տեւկերի ազնիւ արեան շառաւիղ,
 Քաջակորով Դիփիփոն, ո՛վ ըզքը
 Այդ դժբնդակ խոցուածներով կեղեքեց,
 Ո՛ր խուժաղութ բարբարոսին ձեռքն ինկար։
 Վերջին գեշերն ականջիս լուր մը հասաւ,
 Թէ դուն Յոյները շարդելէ պարտասած՝
 Դիակներու շուրջն իմ վրայ անկենդան

ԱՆՈՆՑ ՄԱՂԵՐԸ

Ամերիկահայ Տարագիրներուն

Ենա՞ծ ինկած էիր, եւ ես Հոստեան ափն
Ունայն շիրիմ մը կանգնեցի քեզ համար,
Ըստներդ երեք հեղ բարձրաձայն կանչելով:
Արդ կը պահէ նոյն տեղն անունդ ու զէնքերդ:
Բայց չըկըրցայ, ո՞վ սիրելի, զտեսնել քեզ
Եւ չըմեկնած հայրենիքէն՝ թաղել հոն»:

Պրիսման ճեմն այսպէս տըլաւ պատասխան.
« Դէկփորին եւ իր թըշուառ ըստներին
Ամէն պատիւ հատուցիր, ո՞վ բարեկամ,
Առանց բընաւ երեք պակաս բան թողուու.
Բայց սակայն իմ ճակատագիրս ու դրժնէ
Լակոնուհւոյն ոճիր եղան անուի
Ենթարկեցին զիս այս ողորմ վիճակին.
Հէ ինք թողուց այս նըշաններն իմ վըրաս:
Ձի դուն գիտես թէ մենք ինչպէս անցուցինք
Վերջին գիշերը խաբուսիկ ցընծութեամբ
(Դան մ'որ բընաւ պիտի չելլէ մեր մըսքէն),
Եղեռնաւոր երբ ձին մըտաւ ցատկելով
Մեր բարձրաբերձ Պերգամայէն դէպ ի ներս,
Կրելով փորին մէջ մեր զինուած ոստիներն:
Այն ատեն նէ բակոսական կեղծ պարեր
Յօրինելով՝ քաղաքին մէջ կը մուչուր,
Գըլուրն անցած փռփռացի կիներուու.
Եւ բոցավառ շահ մը ձեռքին մէջ բըռնած՝
Կու տար բերդին ծայրէն նըշան Յոյներուն:
Ես նոյն պահուն՝ գլուխը քունէ ծանրացած
Եւ սոսկալի կըռփներէ ոգեսպառ,
Թըշուառ մահճի վրայ մեռելի պէս ինկած
Կ'առնէի խոր ու քաղցր հանգիստ մ'անվըրդով:
Արժանաւոր իմ կողափէցս այն ատեն
Բոլոր գէնքերը տունէն դուրս կը հանէ,
Բարձիս տակի հաւատարիմ սուրս անգամ,
Եւ բանալով դըռները տուն կը խոթէ
Մենեւաւոսն. անտարակոյս յուսալով
Թէ ասով մեն ծառայութիւն մը կ'ընէր
Զինքը սիրով իր առաջին միտնոյն,
Եւ կը քաւէր այսպէս իր հին չարիքներն:
Ի՛նչ երկարեմ. սենհակէս ներս կը խուժեն.
Հետերնին է ոճիրներու ժառն ոգին՝
Եւտիղոսն: Ո՞վ աստուածներ, թափեցէք
Յունաց զբլիուն այդ միենոյն սոսկումներն,
Եթէ արդար բերնով կ'ընեմ այս մաղթանքն:
Խօկ ըզբեզ ի՛նչ դիպուած արդեօք կը բերէ
Ողջ՝ այս կողմերն. ըսէ՛, ծովէն քըշուցար,
Թէ հրամանով աստուածներուն կու գաս հոս.
Կամ թէ արդեօք դըժբախտութիւն մ'ունեցար
Որ ըստփայեց քեզ այս կողմերը գալու,
Մըշտագիշեր, յոգնատըխուր այս զընդանն»:

Թարգմ. Հ. Ա. ՂԱՅԻԿԵԱՆ

Անտիպալ սերունդի մը ամուլ ու ջլատող
Եղարայակցութենէն զգուած, հաւատախնդ
Ղեր հետապնդումներէ ձեռնունայն դարձի
Ու յուսահատ յոգնութեան իրիկուն մը,
ճամբայ ինկայ դէպի անծանօթ ու հեռաւոր
Գաղութիւն տարագիր ամբողջներուն:

Անշատուելու, փախչելու, անցեալին կաւ
պերէն ու կաշկանդումներէն թօթափուեւ
լու անհամբեր տենչանք մը կարծես կըռ
նակէս կը հրէր, և ուժասպառ սրունքներս
կը մղէր գահավէժ ոստումներու:

Ետիս կամաց կամաց կը մեռնէին ձայ
ները, ու կ'իջնէր, կը նուաղէր դժոյզակ
աղմուկը բոլոր բորբոքած մոլուցցներուն,
բոլոր թունաւոր ու անվհատ հեռերուն,
բոլոր անարգ ու շնական խաբէութիւննե
րուն, բոլոր պիղծ ու վայրագ մատնու
թիւններուն:

Տաճանիլի էր ճամբան, այլ կազդու
րիչ՝ նոր հորիզոններուն պայծառ խաղա
ղութեամբն ու լուսութեան ու մոռացումի
զրկին մայրական մերձեցումով:

Ես զգացի որ ծերացեր էի: Ուսերս կը
փլչէին երիտասարդ պատրանքներու քայ
քայումին տակ, ու քայլերս՝ ունայն ցնորք
ներու ետեւէն հե ի հե վագելէ պարտաւ
սած՝ խեղճօրէն կը դանդաղէին: Եւ ամ
բողջ վատնուած կեանքիս անձեռնունելի
կորուստին գիտակցութեանը հետ՝ ներսիւ
դիս ծայր կուտար հիմա ցաւագին ու
խուճապական կասկածը՝ թէ մի՞ գուցէ ան
օգուտ ըլլայի այլ ևս Սուրբ Կոիւին հա
մար որուն կարմիր երագէն յաճախուեր
էի երբեմն, բայց որուն չէի մասնակցեր,
անկարող՝ միւսներն ալ քաշել հետս տա
նելու, և չափազանց վատ՝ անշուշտ՝ միս
մինակ անոր մէջ նետուելու...:

Տիւր ու գիշերներ ճեղքել անցնելէ ետք,
աշնան վերջալոյսի մը անհուն հոգեվար
քին առջէն շտապելու վրայ էի, երբ յան
կարծ մարդկային ձայներ լսեցի հեռուէն:
Իրիտ ու խաղաղ ձայներ էին, բայց որ
քան անուշ կու գար անոնց հզօր ու ան